ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

Ի պատասխան Ձեր 14.11.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքում ծառերի և թփերի հատումը թույլատրվում է ոչ միայն չորացած լինելու դեպքում, այլ Երևանի ավագանու 18.11.2009 թվականի թիվ 36-Ն որոշմամբ սահմանված դեպքերում: Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի յուրաքանչյուր ստորաբաժանում ունի դենդրոլոգ մասնագետ (թվով 10), որոնց աշխատանքային պարտականությունն է հանդիսանում ծառերի հատման վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումը: Ստորաբաժանումների դենդրոլոգների աշխատանքը համակարգվում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գլխավոր դենդրոլոգի կողմից: Այս պարագայում յուրաքանչյուր հատվող ծառի համար լրացուցիչ փորձաքննություն պատվիրելը ֆինանսական տեսանկյունից համարվում է ոչ նպատակահարմար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ